ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՄԱՆԵ ԱՐԱՄԻ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.03 Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МАНЕ АРАМОВНА МАРКОСЯН

ПРОБЛЕМЫ ГРАЖДАНСКО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ОТНОШЕНИЙ НЕДРОПОЛЬЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – Частное право: гражданское право; торговое (коммерческое) право; международное частное право; семейное право; трудовое право; право социального обеспечения.

ЕРЕВАН-2026

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Վահրամ Դավիթի Ավետիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Մերուժանի Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Արսեն Աշոտի Թավադյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Արդարադատության ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի օգոստոսի 24-ին ժ. 14^{30} -ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юрид. наук, профессор
Ваграм Давидович Аветисян

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор
Армен Меружанович Айкянц
кандидат юрид. наук, доцент
Арсен Ашотович Тавадян

Ведущая организация: **Академия юстиции РА**

Защита состоится 24-го августа 2026 года в 14^{30} часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 23 июня 2026 года.

Ученный секретарь специализированного совета:
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հանքարդյունաբերությունը **(այսուհետ՝ նաև «ընդերքօգտագործում»)** Հայաստանի Հանրապետության տնտեսության ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերից է, որը զգալի դեր ունի արտահանման, օտարերկրյա ներդրումների ներհոսքի, զբաղվածության ապահովման, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի եկամուտների ձևավորման մեջ: Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալների (ՀՀ ՊԵԿ 24.11.2025 թվականի թիվ /71-6/71614-2025 գրություն)՝ հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների կողմից 2021 թվականին վճարած հարկերը կազմել են ՀՀ պետական բյուջեի եկամուտների 6.7%-ը (98,793,518,706 ՀՀ դրամ), 2022 թվականին՝ 9.6%-ը (176,673,766,663 ՀՀ դրամ), 2023 թվականին՝ 3.9%-ը (83,983,979,368 ՀՀ դրամ), 2024 թվականին՝ 5.1%-ը (121,064,095,311 ՀՀ դրամ), իսկ 2025 թվականին՝ մոտ 4.1%-ը (108,696,736,089 ՀՀ դրամ):

Չնայած պետության համար հանքարդյունաբերության ունեցած առանցքային դերին՝ նշված ոլորտը կարգավորող իրավական դաշտում առկա են համակարգային խնդիրներ, որոնք բացասաբար են ազդում ոլորտի ներդրումային գրավչության, իսկ հեռանկարում՝ ռազմավարական զարգացման վրա: Մասնավորապես, ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտի՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի համակարգային ուսումնասիրությունը վկայում է, որ ընդերքօգտագործման ոլորտի հարաբերություններն առավելապես կարգավորվում են վարչաիրավական նորմերով և կարգավորման իմպերատիվ մեթոդով, իսկ քաղաքացիական իրավունքի նորմերին և ինստիտուտներին նշված ոլորտի իրավական կարգավորման գործընթացում առ այսօր մեծ նշանակություն չի տրվում, դրանց դերը ընդերքօգտագործման հարաբերությունների կարգավորման գործընթացում բավարար չափով բացահայտված չէ: Ավելին, ներպետական օրենսդրությունը շատ հաճախ անհարկի սահմանափակում է ընդերքօգտագործման հարաբերություններում կարգավորման դիսպոզիտիվ մեթոդի կիրառման դեպքերը, իսկ ոլորտում առկա լրացուցիչ վարչարարությունը, գործող ընթացակարգերի բարդությունը ՀՀ կառավարության կողմից 2023 թվականին ընդունված Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մեջ նշվում են որպես ոլորտի ներդրումային գրավչության վրա բացասաբար ազդող գործոններ:

Շուկայական տնտեսության և տնտեսական գործունեության ազատության պայմաններում ընդերքօգտագործման հարաբերությունների իրավական կարգավորումը չի կարող արդյունավետ լինել՝ հիմնվելով

վարչաիրավական կառուցակարգերի վրա, այլ ենթադրում է քաղաքացիաիրավական և վարչաիրավական կառուցակարգերի արդյունավետ համադրում՝ ուղղված հանրային և մասնավոր շահերի արդար հավասարակշռմանը: Այսպես, մի կողմից, ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչում է ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականությունը՝ պետության վրա դնելով շրջակա միջավայրի պահպանության, բնական պաշարների ողջամիտ օգտագործման պոզիտիվ պարտականություններ (ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդված), որոնց շուրջ ծագող հարաբերությունները կապված են հանրային շահերի պաշտպանության հետ և ենթակա են վարչաիրավական կարգավորման: Մյուս կողմից, ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար պարտադիր իրավաբանական փաստերից մեկն ընդերքօգտագործման պայմանագիրն է, ինչը թույլ է տալիս քննարկել ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիաիրավական (մասնավոր-իրավական) հարաբերության տարրերի առկայությունը և պայմանավորում է դրանց քաղաքացիաիրավական կարգավորման առանձնահատկությունների հետազոտության անհրաժեշտությունը:

Բացի այդ, շուկայական տնտեսության պայմաններում ընդերքօգտագործման ոլորտում հանդիպող օբյեկտները դիտարկվում են ոչ միայն որպես «բնական հարստություն», այլև՝ քաղաքացիական շրջանառության մեջ ներգրավված օբյեկտներ: Այս հանգամանքն առաջ է բերում ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների քաղաքացիաիրավական շրջանառության, դրանց նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների իրականացման առանձնահատկություններն ուսումնասիրելու և համապատասխան օրենսդրական լուծումներ առաջարկելու անհրաժեշտություն:

Թեմայի հետազոտության գիտագործնական անհրաժեշտությունը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ հայկական մասնագիտական գրականության մեջ ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները մինչ օրս չեն դարձել համակողմանի գիտական հետազոտության առարկա:

Վերոնշյալ հետևությունները պայմանավորում են ներպետական օրենսդրությամբ ընդերքօգտագործման հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական իրավունքի նորմերի, ինստիտուտների, սկզբունքների, կարգավորման դիսպոզիտիվ մեթոդի կիրառման շրջանակը պարզելու և հստակեցնելու, դրանց կիրառման տեսագործնական հիմնախնդիրները հետազոտելու և գործնական լուծումներ առաջարկելու անհրաժեշտությունը՝ հաստատելով թեմայի գիտագործնական կարևորությունը և արդիականությունը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Հայկական իրավաբանական գրականության մեջ ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները առայժմ համակարգային և համալիր գիտական ուսումնասիրության չեն ենթարկվել: Ընդերքօգտագործման հարաբերությունների իրավական կարգավորմանն առնչվող առանձին հարցերի անդրադարձ է կատարվել Ս. Բաղալյանի, Օ. Գեղամյանի, Լ. Պետրոսյանցի, Տ. Մարկոսյանի և Մ. Մարկոսյանի, Ա. Աբելյանի հեղինակած գիտական հոդվածներում:

Արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ ատենախոսության թեմային առնչվող տարբեր հիմնախնդիրներ ուսումնասիրել են նաև Ն. Ջ. Քեմփբելը, Թ. Վ. Վելդեն, Մ. Ս. Մեքին, Ջ. Հաուելը, Չ. Ե. Կրակոֆը, Ջ. Թարանտը, Պ. Տոլեդանոն, Ս. Թոմասհաուզենը, Վ. Գ. Ռոզենֆելդը, Դ. Վ. Վասիլեվսկայան, Ն. Բ. Մուխիտդինովը, Ա. Վ. Պրոկայեվը, Ա. Ա. Նեդելկոն, Ա. Գ. Սավոստյանովը, Վ. Վ. Լեվոչկոն, Ժ. Ս. Էլուբաեվը, Ա. Վ. Սապոժնիկովը, Ա. Լ. Պրոսկուրինան, Ե. Տրետյակովան, Ե. Ու. Իխսանովը և այլն:

Նշված հեղինակների և օտարերկրյա այլ գիտնականների աշխատությունները կազմում են սույն հետազոտության տեսական հիմքը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են ընդերքօգտագործման հարաբերությունները՝ դրանց քաղաքացիաիրավական կարգավորման համատեքստում: Հետազոտության առարկան են կազմում ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման դերի և շրջանակի վերաբերյալ հարցերը, ընդերքօգտագործման իրավունքի ծագման, փոփոխման, դադարման հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական իրավունքի նորմերի կիրառման հիմնախնդիրները, ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների իրավական կարգավորման, ինչպես նաև ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտների քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է: Նշված նպատակը պայմանավորում է հետևյալ խնդիրների առաջադրումը.

- բացահայտել ընդերքօգտագործման հարաբերությունների կարգավորման գործընթացում քաղաքացիական իրավունքի դերն ու կիրառման շրջանակը,

- հետազոտել ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների համակարգը,
- բացահայտել ներպետական օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքի ծագման, փոփոխման և դադարման գործընթացում քաղաքացիաիրավական նորմերի կիրառման առկա հիմնախնդիրները,
- վերլուծել ընդերքօգտագործման հարաբերությունների պայմանագրային կարգավորման առանձնահատկությունները, ինչպես նաև՝ ընդերքօգտագործման պայմանագրի քաղաքացիաիրավական բնույթը,
- հետազոտել ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտների քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները ներպետական օրենսդրությամբ,
- ձևակերպել առաջարկություններ՝ ուղղված հետազոտության ընթացքում վեր հանված խնդիրների լուծմանը և ներպետական օրենսդրությամբ ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման կառուցակարգերի կատարելագործմանը:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Ատենախոսության իրավական (նորմատիվ) հիմքը կազմում են Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների (Ղազախստան, Գերմանիա, ՌԴ և այլն)՝ ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրությունները, իսկ փորձառական հիմքը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական, վճռաբեկ, վերաքննիչ, վարչական և սնանկության դատարանների դատական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը, Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի վճիռները և օտարերկրյա դատական պրակտիկան:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքը կազմել են ինչպես ընդհանուր գիտական (անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, ընդհանրացում և այլն), այնպես էլ մասնագիտական հատուկ (դիալեկտիկական, ձևական-տրամաբանական, իրավահամեմատական, կառուցվածքային-գործառութային և այլն) մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը հայրենական իրավագիտության մեջ առաջին խորը և համապարփակ աշխատանքն է, որի շրջանակներում ուսումնասիրվել են ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական

կարգավորման հիմնախնդիրները, հիմնավորվել է ընդերքօգտագործման հարաբերությունների համար դրանց քաղաքացիաիրավական կարգավորման նշանակությունը, շրջանակը, վեր են հանվել և վերլուծվել ընդերքօգտագործման ոլորտում ծագող այն հարաբերությունները, որոնք ենթակա են կարգավորման քաղաքացիական իրավունքի նորմերով, ինչպես նաև բացահայտվել են ընդերքօգտագործման հարաբերությունների պայմանագրային կարգավորման հիմնահարցերը և ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտների քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները:

Կատարված հետազոտության արդյունքում ներկայացվել են ինչպես տեսական նշանակություն ունեցող եզրահանգումներ, այնպես էլ օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթը արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, եզրակացությունում, ինչպես նաև հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Կատարված ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման նշանակությունը, դրանց շրջանակը, իսկ ընդերքօգտագործման իրավունքի բնույթին վերաբերող հարցի քննարկման շրջանակներում բացահայտվել է, որ ինչպես մասնագիտական գրականությունում, այնպես էլ ՀՀ գործող օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքի իրային իրավական կամ պարտավորաիրավական բնույթի վերաբերյալ միասնական մոտեցումը և համապատասխան իրավակարգավորումը բացակայում է, ինչն առաջացնում է տեսական և գործնական խնդիրներ ընդերքօգտագործողի իրավունքների արդյունավետ և համակողմանի իրականացման և պաշտպանության հարցում: Միաժամանակ վերլուծելով ընդերքօգտագործման իրավահարաբերությունների ներքին և արտաքին կողմերին բնորոշ հատկանիշները՝ կատարվել է եզրահանգում առ այն, որ ընդերքօգտագործման իրավունքն ունի իրային-իրավական բնույթ, քանի որ ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտը՝ ընդերքի տեղամասը, անհատապես որոշվող իր է, ընդերքօգտագործման իրավունքն ունի բացարձակ բնույթ, առանձին նյութական արժեք և անխզելիորեն կապված է ընդերքի տեղամասի հետ: Ընդերքօգտագործման իրավունքի իրային-իրավական բնույթը ենթադրում է բոլորի՝ (այդ թվում՝ պետության) այդ

իրավունքի ցանկացած խախտումից ձեռնպահ մնալու պարտականությունը (հարաբերության արտաքին կողմ): Վեր հանելով ընդերքօգտագործման իրավունքի ներքին կողմին բնորոշ հատկանիշները՝ հիմնավորվել է, որ ընդերքօգտագործման իրավունքը, փաստացի ծագելով նաև ընդերքօգտագործման պայմանագրի հիման վրա, ընդերքօգտագործողի և պետության միջև առաջացնում է պարտավորաիրավական բնույթի հարաբերություններ:

Ընդերքօգտագործման իրավունքի բնույթի հետ կապված վերոգրյալ տեսական և գործնական խնդիրները լուծելու նպատակով առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (170-րդ հոդվածի 1-ին մաս) գույքային իրավունքների շարքում ընդերքօգտագործման իրավունքը նախատեսել որպես սահմանափակ իրային իրավունքի առանձին տեսակ:

2. Ընդերքօգտագործման իրավունքի ծագման հիմքերի ուսումնասիրության համատեքստում պարզվել է, որ ներպետական օրենսդրությամբ ընդերքօգտագործման պայմանագրի ինստիտուտը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում չի ենթարկվել միասնական նորմատիվ-իրավական կարգավորման: Բացի այդ, գործող իրավակարգավորումների պարագայում «ընդերքօգտագործման պայմանագիր» եզրույթը չունի ինքնուրույն քաղաքացիաիրավական նշանակություն և չի կարող դիտարկվել որպես պայմանագրի ինքնուրույն տեսակ ***(“sui generis”)***, այլ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար հիմք հանդիսացող բոլոր պայմանագրերի (երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրերը) համար օգտագործվում է որպես հավաքական հասկացություն: Նման պայմաններում ընդերքօգտագործման պայմանագիրը այդ հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման և ընդերքօգտագործման հարաբերությունների սուբյեկտների տնտեսական ազատության ապահովման համար ինքնուրույն դեր չի կատարում: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում ուղղակիորեն սահմանված չեն նաև ընդերքօգտագործման պայմանագրի էական պայմանները, ինչն ընդերքօգտագործման պայմանագրից բխող հարաբերությունների կարգավորմանը կարող է հաղորդել անորոշություն՝ դրանից բխող բազմաթիվ իրավական ռիսկերով հանդերձ:

Նշված տեսական և գործնական խնդիրների լուծման նպատակով՝ առաջարկվել է ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը զարգացնել այդ հարաբերությունների ունիֆիկացիայի սկզբունքով և ՀՀ ընդերքի մասին

օրենսգրքում ընդերքօգտագործման պայմանագրի ինստիտուտին նվիրված առանձին գլուխ նախատեսել, որում կսահմանվեն ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի նկատմամբ կիրառելի «ընդհանուր դրույթները», յուրաքանչյուր տեսակի պայմանագրի առանձնահատկությունները սահմանող հատուկ նորմերը, ինչպես նաև կհստակեցվեն ընդերքօգտագործման պայմանագրերի էական պայմանները:

3. Ընդերքօգտագործման իրավունքի դադարման հիմքերի հետազոտության շրջանակում հիմնավորվել է, որ ընդերքօգտագործման իրավունքի դադարման ընթացակարգը սահմանող՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածն ունի վերանայման անհրաժեշտություն, քանի որ չի երաշխավորում ընդերքօգտագործման պայմանագիրը կողմերի փոխադարձ համաձայնությամբ լուծելու քաղաքացիաիրավական կառուցակարգի իրացումը, խաթարում է ներդրողների շահերի պաշտպանությունը և ընդերքօգտագործման իրավունքի գործողության ողջ ժամկետի ընթացքում դրա նկատմամբ ընդերքօգտագործողի «լեգիտիմ ակնկալիքը»: Մասնավորապես, գործող օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման ընթացակարգի ուսումնասիրությունը թույլ է տվել եզրակացնել, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածը պետությանը հնարավորություն է տալիս ընդերքօգտագործողի ստանձնած ցանկացած պարտավորության խախտման դեպքում միակողմանի դադարեցնել ընդերքօգտագործման թույլտվությունը և որպես հետևանք՝ լուծել ընդերքօգտագործման պայմանագիրը, այն դեպքում, եթե ընդերքօգտագործողը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված ժամկետներում չի վերացրել պարտավորության խախտման մասին լիազոր մարմնի գրավոր զգուշացման կամ կոնկրետ տեսակի պարտավորությունների խախտման դեպքում՝ ընդերքօգտագործման իրավունքի կասեցման (ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2.1-ին մաս) հիմքերը: Ավելին, ՀՀ ընդերքի մասին 30-րդ հոդվածով ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման բոլոր վեճերի՝ բացառապես վարչադատավարական կարգով լուծման պրակտիկան իմաստազուրկ է դարձնում ընդերքօգտագործման հարաբերություններում պայմանագրի կարգավորիչ նշանակությունը:

Նշված գործնական խնդրի լուծման նպատակով առաջարկվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածով սպառիչ թվարկել ընդերքօգտագործման թույլտվությունը պետության կողմից միակողմանի դադարեցնելու համար հիմք հանդիսացող պարտավորությունների խախտման շրջանակը՝ սահմանափակելով այն ընդերքօգտագործողի՝ հանրային իրավահարաբերության տարրեր պարունակող պարտավորությունների (օրինակ՝ ընդերքօգտագործողի հարկային,

բնապահպանական պարտավորությունները և այլն) խախտումներով: Ընդերքօգտագործողի՝ մասնավոր իրավահարաբերության տարրեր պարունակող պարտավորությունների (օրինակ՝ աշխատանքների իրականացում պայմանագրի պայմաններին համապատասխան, ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների փոփոխության դեպքում լիազոր մարմնին գրավոր տեղեկության տրամադրում և այլն) խախտումների դեպքում առաջարկվել է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ գլխով նախատեսված՝ պայմանագիրը փոփոխելու և լուծելու դրույթները:

4. Ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկու-թյունների շուրջ կատարված վերլուծությունը թույլ է տվել եզրակացնել, որ ընդերքը և ընդերքի տեղամասը քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտներ են: Ընդ որում՝ ընդերքը քաղաքացիական շրջանառությունից հանված օբյեկտ է, իսկ ընդերքի տեղամասը՝ սահմանափակ շրջանառու օբյեկտ: Օրենսդրական մակարդակում ընդերքի տեղամասերը (ընդերքի մասերը) որպես քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտներ առանձնացնելը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդված) կրում է իրավաբանական ֆիկցիայի բնույթ, որի նպատակը ընդերքը բացառապես ընդերքօգտագործման նպատակներով պայմանական տեղամասերի բաժանելու և որպես անհատապես որոշվող անշարժ գույք ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման միջոցով քաղաքացիաիրավական շրջանառության մեջ ներգրավելու իրավական հիմքերի ձևավորումն է: Հետևաբար, ընդերքօգտագործման իրավունքը կարող է ծագել ոչ թե ընդերքի, այլ անհատապես որոշվող գույքի՝ ընդերքի տեղամասի նկատմամբ: Այդուհանդերձ, ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը սահմանում է ընդերքը (այլ ոչ թե ընդերքի տեղամասը) օգտագործման իրավունքով իրավունքի այլ սուբյեկտներին տրամադրելու վերաբերյալ կարգավորում (ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մաս): Նման իրավակարգավորումը չի արտացոլում ընդերքօգտագործման իրավունքի իրական առարկան և կարող է հանգեցնել «ընդերք» և «ընդերքի տեղամաս» օբյեկտների նույնացման:

Առկա տեսական և գործնական խնդիրների լուծման նպատակով առաջարկվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասում կատարել փոփոխություն, որի համաձայն՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով օգտագործման են տրամադրվում ընդերքի տեղամասերը, այլ ոչ թե ընդերքը, ինչի արդյունքում կլուծվի ընդերքի և ընդերքի տեղամասի՝ որպես քաղաքացիական իրավունքների առանձին

օբյեկտների՝ օրենսդրական մակարդակում տարբերակման խնդիրը:

5. Ընդերքօգտագործման իրավունքի քաղաքացիաիրավական շրջանառության առանձնահատկությունների հետազոտության հիման վրա կատարվել է եզրահանգում առ այն, որ գործող օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման վերաբերյալ կարգավորումները (ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 22-23-րդ հոդվածներ) չեն սահմանում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման դեպքում նոր ընդերքօգտագործողին ընդերքօգտագործման իրավունքի իրակա-նացման համար անհրաժեշտ գույքային համալիրի (անշարժ գույքեր, հողամասի նկատմամբ իրավունքներ և այլն) օտարման հարցերը: Նշված օրենսդրական բացի արդյունքում գործնականում սոսկ ընդերքօգտա-գործման իրավունքի փոխանցումը նոր ընդերքօգտագործողին կարող է դառնալ ոչ իրացվելի իրավունքի օտարում, քանի որ ընդերքօգտագործման իրավունքը, առանց դրա հետ կապված օբյեկտների օտարման, ձեռքբերողի համար չի կարող լիովին ծառայել իր նպատակային նշանակությամբ:

Հետազոտությամբ վեր հանված գործնական խնդրի լուծման նպատակով առաջարկվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում՝

1) սահմանել ընդերքօգտագործման իրավունքի իրականացման հետ կապված օբյեկտների (անշարժ գույքեր, հողամասի նկատմամբ իրավունքներ և այլն) շրջանակը,

2) նախատեսել դրանք ընդերքօգտագործման իրավունքի հետ՝ լիազոր մարմնի համաձայնությամբ որպես մեկ գույքային համալիր տնօրինելու հարցերը կարգավորող իրավական նորմեր:

6. Ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտ է երկրաբանական տեղեկատվությունը, որի ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ երկրաբանական տեղեկատվության որոշ տեսակներ մտավոր սեփականության (հեղինակային) իրավունքի օբյեկտներ են (օրինակ՝ երկրաբանական քարտեզներ, ընդերքում պարունակվող օգտակար հանածոների կանխատեսվող պաշարների վերաբերյալ տվյալներ և այլն), իսկ որոշ տեսակներ՝ առևտրային գաղտնիք (օրինակ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մեթոդների և տեխնոլոգիաների մասին տեղեկատվությունը): Սակայն գործող օրենսդրությամբ երկրաբանական տեղեկատվության քաղաքացիաիրավական կարգավիճակի նշված առանձնահատկությունները ամբողջությամբ հաշվի առնված չեն, ինչի արդյունքում բացակայում են երկրաբանական տեղեկատվության նկատմամբ ընդերքօգտագործողի իրավունքների արդյունավետ իրականացման, ինչպես նաև դրա նկատմամբ պետության և

ընդերքօգտագործողի իրավունքների ողջամիտ հավասարակշռությունը երաշխավորող կառուցակարգերը: Ամրագրելով երկրաբանական տեղեկատվության նկատմամբ պետության սեփականության իրավունքը՝ ներպետական օրենսդրությունը չի հստակեցնում երկրաբանական տեղեկատվության նկատմամբ ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում ընդերքօգտագործողի իրավազորությունների հստակ ծավալը և բովանդակությունը:

Վերոգրյալ գործնական խնդիրների լուծման նպատակով առաջարկվել է օրենսդրական մակարդակում հստակեցնել հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող երկրաբանական տեղեկատվության տեսակները, դրանց իրավատերերին, դրանց նկատմամբ հեղինակների գույքային և անձնական իրավունքների իրականացման առանձնահատկությունները՝ ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում և պետությանը երկրաբանական տեղեկատվությունը փոխանցելուց հետո: Անհրաժեշտ է նաև օրենսդրությամբ հստակեցնել ընդերքօգտագործողի կողմից երկրաբանական տեղեկատվությունը տնօրինելու իրավազորության բովանդակությունը՝ սահմանելով երրորդ անձանց երկրաբանական տեղեկատվությունը հատուցման դիմաց օտարելու, տարածելու իրավունքները և այդ իրավունքների իրականացման սահմանափակումները, ինչպես նաև նախատեսել առևտրային գաղտնիք կազմող երկրաբանական տեղեկատվությունը հատուցելի հիմքերով պետությանը փոխանցելու վերաբերյալ իրավական կարգավորում:

7. Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տվել եզրակացնել, որ ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքի վերաբերյալ օրենսդրական նորմերի բացակայության պայմաններում ընդերքօգտագործողի և պետության միջև ծագում են վեճեր, որոնց շրջանակում կողմերը վիճարկում են ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքի հարցը: Բացի այդ, ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը և ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը նախատեսում են ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ ընդերքօգտագործողի գույքային իրավունքների իրականացման ծավալի վերաբերյալ միմյանց հակասող կարգավորումներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդերքօգտագործման նպատակը միայն օգտակար հանածոների արդյունահանման կամ երկրաբանական ուսումնասիրությունների համար ընդերքն օգտագործման տրամադրելն է (ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 19-րդ հոդված)՝ արձանագրվել է, որ ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ ընդերքօգտագործողի սեփականության իրավունքի ամրագրումը չի բխի ընդերքօգտագործման նպատակներից:

Ուստի, վերոգրյալ գործնական խնդրի լուծման նպատակով՝ առաջարկվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում ամրագրել ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ պետության սեփականության իրավունքը՝ սահմանելով ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ ընդերքօգտագործման թույլտվության գործողության ժամկետում ընդերքօգտագործողի գույքային իրավունքների (ընդերքօգտագործման թափոնների տիրապետման և օգտագործման) հստակ ծավալը, ինչը թույլ կտա նշված հարցում հավասարակշռել հանրային և մասնավոր շահերը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը ընդերքօգտագործման իրավահարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորմանը վերաբերող բազում տեսագործնական հիմնախնդիրների վերլուծությունն է և այնպիսի մեկնաբանություններ և առաջարկներ ներկայացնելը, որոնք կարող են հիմք լինել ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրների՝ այդ թվում՝ ընդերքօգտագործման հարաբերությունների պայմանագրային կարգավորման, ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտների շուրջ հետագա գիտական հետազոտությունների, օրենսդրական բարեփոխումների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ներկայացված վերլուծությունները, մեկնաբանությունները, եզրակացությունները և առաջարկները կարող են օգտագործվել ընդերքօգտագործման ոլորտին առնչվող հետագա ուսումնասիրություններում, ոլորտում ծավալվող իրավաստեղծ գործունեության մեջ և իրավակիրառ պրակտիկայում, համապատասխան լիազոր մարմնի և ընդերքօգտագործողների կողմից իրենց գործունեության ընթացքում:

Ատենախոսությունը և դրա արդյունքները կարող են օգտագործվել բարձրագույն ուսումնական հաստատություններում իրավագիտություն մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով ուսումնառության ընթացքում՝ քաղաքացիական իրավունք, էկոլոգիական իրավունք, հողային իրավունք դասընթացների շրջանակներում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի թվով 8 գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, դրանցում ամփոփված 7

պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության՝ **«Ընդերքօգտագործման իրավունքի ընդհանուր բնութագիրը և քաղաքացիաիրավական կարգավորման ասպեկտները»** վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երեք պարագրաֆից:

Առաջին գլխի՝ «Ընդերքօգտագործման հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները և դրանց քաղաքացիաիրավական կարգավորման նշանակությունը» վերտառությամբ առաջին պարագրաֆի թվով չորս ենթապարագրաֆներում համապարփակ ներկայացվել են ընդերքօգտագործման իրավունքի կարգավորման առարկան, մեթոդները, սկզբունքները, սուբյեկտային և օբյեկտային կազմը, այնուհետև վերլուծվել են ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հարցերը: Հիմնավորելով ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման կարևոր նշանակությունը՝ հեղինակը հետևություն է կատարել այն մասին, որ ՀՀ-ում ընդերքօգտագործման ոլորտի օրենսդրական բարեփոխումների առանցքում պետք է դրվի այդ հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման դերի մեծացման գաղափարը՝ ուրվագծելով քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորման ենթակա հարաբերությունների շրջանակը:

Առաջին գլխի՝ «Ընդերքօգտագործման իրավունքի բնույթը, տեսակները, դրանց ծագման, փոփոխման և դադարման հիմքերը» վերտառությամբ երկրորդ պարագրաֆում հետազոտվել է ընդերքօգտագործման իրավունքի բնույթի (իրային-իրավական կամ պարտավորաիրավական) հարցը՝ ներկայացնելով նշված հարցի վերաբերյալ տեսական գրականության մեջ ձևավորված մոտեցումները, գործնական մեկնաբանությունները: Քննարկվել են նաև գործող օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքի ծագման, փոփոխման և դադարման հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական իրավունքի նորմերի կիրառման հիմնախնդիրները: Ամփոփելով կատարված

հետազոտությունը, ի թիվս այլնի, առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ընդերքօգտագործման իրավունքը նախատեսել որպես սահմանափակ իրային իրավունքի առանձին տեսակ, ինչպես նաև ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման ընթացակարգի նկատմամբ գործող վարչաիրավական կառուցակարգի փոխարեն կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագիրը փոփոխելու և լուծելու դրույթներն այն դեպքում, եթե խախտվել են ընդերքօգտագործողի՝ մասնավոր իրավահարաբերության տարրեր համարվող պարտավորությունները:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Ընդերքօգտագործման հարաբերությունների պայմանագրային կարգավորման առանձնահատկությունները: Ընդերքօգտագործման պայմանագիրը որպես քաղաքացիաիրավական պայմանագիր» վերտառությամբ, քննարկվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով ընդերքօգտագործման պայմանագրի նորմատիվ-իրավական կարգավորման հիմնախնդիրները, ընդերքօգտագործման պայմանագրի տարրերը, էական պայմանները: Հիմնավորվել է, որ *«ընդերքօգտագործման պայմանագիր»* եզրույթը գործող իրավակարգավորումների պայմաններում չի կարելի մեկնաբանել որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր, այլ օգտագործվում է որպես հավաքական հասկացություն, որի ներքո պետք է հասկանալ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար կնքվող պայմանագրերը: Առաջարկվել է ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը զարգացնել այդ հարաբերությունների ունիֆիկացիայի սկզբունքով՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում ընդերքօգտագործման պայմանագրի ինստիտուտին նվիրված առանձին գլուխ նախատեսելով:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտների քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները» վերտառությամբ, կազմված է չորս պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Ընդերքի քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները» վերտառությամբ, հետազոտվել է ՀՀ օրենսդրությամբ «ընդերք» և «ընդերքի տեղամաս» եզրույթների հարաբերակցությունը՝ հիմնավորելով, որ ընդերքը և ընդերքի տեղամասը քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտներ են, ունեն տարբեր քաղաքացիաիրավական կարգավիճակներ, իսկ ընդերքի տեղամասերի առանձնացումը ընդերքից կրում է իրավաբանական ֆիկցիայի բնույթ, որի նպատակը ընդերքը բացառապես ընդերքօգտագործման նպատակներով պայմանական

տեղամասերի բաժանելու և քաղաքացիաիրավական շրջանառության մեջ ներգրավելու իրավական հիմքերի ձևավորումն է: Վերլուծվել են նաև ընդերքի հետ անմիջականորեն կապված այլ օբյեկտների՝ հողամասի, օգտակար հանածոների իրավական ռեժիմի առանձնահատկությունները:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Ընդերքօգտագործման իրավունքի՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի քաղաքացիաիրավական շրջանառության առանձնահատկությունները» վերտառությամբ, ուսումնասիրվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով ընդերքօգտագործման իրավունքի քաղաքացիաիրավական շրջանառության դեպքերը, օրենքով նախատեսված կարգի խախտմամբ ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման գործարք կնքելու իրավական հետևանքները, ինչպես նաև ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման հարցերը կարգավորող օրենսդրության բացերը: Կատարված հետազոտության արդյունքում առաջարկվել է օրենսդրությամբ հստակեցնել օրենքով սահմանված կարգի խախտմամբ կնքված ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման գործարքների իրավական հետևանքները, նախատեսել ընդերքօգտագործման իրավունքի հետ կապված օբյեկտները որպես մեկ գույքային համալիր քաղաքացիաիրավական շրջանառության մեջ ներգրավելու կառուցակարգեր, ինչպես նաև սահմանել լիազոր մարմնի նախնական համաձայնությամբ ընդերքօգտագործող իրավաբանական անձի բաժնեմասերի, բաժնետոմսերի օտարման գործարքների կնքման պահանջը, եթե նման գործարքը հանգեցնում է այդ իրավաբանական անձի մասնակիցների կամ բաժնետերերի ձայների մեծամասնության կենտրոնացմանը մեկ անձի ձեռքում:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Երկրաբանական տեղեկատվության քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները» վերտառությամբ, ուսումնասիրվել են երկրաբանական տեղեկատվության՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի առանձնահատկությունները: Հիմնավորվել է, որ երկրաբանական տեղեկատվության որոշ տեսակներ մտավոր գործունեության արդյունք են, ուստի հեղինակային իրավունքի օբյեկտներ են, իսկ որոշ տեսակներ՝ կազմում են առևտրային գաղտնիք: Վերլուծության արդյունքում կատարվել է եզրահանգում առ այն, որ ՀՀ օրենսդրությամբ երկրաբանական տեղեկատվության նշված առանձնահատկությունները հաշվի առնված չեն, և ներկայացվել են առաջարկներ՝ ուղղված ՀՀ օրենսդրությամբ հեղինակային իրավունքի օբյեկտ և առևտրային գաղտնիք կազմող երկրաբանական տեղեկատվության իրավական կարգավիճակի առանձնահատկությունների

հստակեցմանը: Բացի այդ, առաջարկվել է հստակեցնել ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում երկրաբանական տեղեկատվության նկատմամբ ընդերքօգտագործողի իրավազորությունների ծավալը և բովանդակությունը:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Ընդերքօգտագործման թափոնների քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները» վերտառությամբ, անդրադարձ է կատարվել ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքն ամրագրող նորմերի բացակայությամբ պայմանավորված՝ դատական պրակտիկայում ընդերքօգտագործողի և պետության միջև ծագող վեճերին, ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ ընդերքօգտագործողի իրավազորությունները սահմանող ներպետական օրենսդրության հակասական կարգավորումներին: Կատարված հետազոտության արդյունքում առաջարկվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում հստակեցնել ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտին:

Ատենախոսության եզրակացության մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքները և հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման առնչությամբ ներկայացված առաջարկները: Ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, այդ եզրահանգումները և առաջարկները ամփոփ հանգում են հետևյալին.

1. Կատարված հետազոտության արդյունքում հիմնավորվել է, որ ընդերքօգտագործման ոլորտի հետագա օրենսդրական բարեփոխումների առանցքում պետք է դրվի ընդերքօգտագործման հարաբերությունների վարչաիրավական կարգավորմանը զուգահեռ դրանց քաղաքացիաիրավական կարգավորման դերի մեծացման գաղափարը: Ընդ որում՝ պետք է հաշվի առնել, որ ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման շրջանակն ընդգրկում է ընդերքօգտագործման ոլորտում ծագող այն հարաբերությունները, որոնք հիմնված են կողմերի կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության սկզբունքների վրա (ընդերքօգտագործման ոլորտում ծագող պայմանագրային հարաբերությունները, ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների նկատմամբ սեփականության իրավունքը, այլ իրային և պարտավորական իրավունքները և այլն):

2. Ընդերքի մասը (տեղամասը) անշարժ գույք է, սակայն դրա նկատմամբ ծագող գույքային իրավունքները չեն ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման, ինչը

հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասին և 301-րդ հոդվածի 1-ին մասին: Հաշվի առնելով անշարժ գույքի նկատմամբ ծագող իրավունքների պետական գրանցման ինստիտուտի բացառիկ նպատակները՝ կատարվել է եզրահանգում առ այն, որ ընդերքօգտագործման իրավունքի և ընդերքի մասերի նկատմամբ ծագող իրավունքների պետական գրանցման պահանջի բացակայությունը հանգեցնում է ընդերքօգտագործման իրավունքի նկատմամբ ընդերքօգտագործողի սեփականության իրավունքի իրականացման և պաշտպանության երաշխիքների բացակայության: Բացի այդ, գործող օրենսդրությամբ նախատեսված ընդերքօգտագործման իրավունքի հաշվառումը (ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 31-րդ հոդված) ընդերքօգտագործման իրավունքի ծագման պարտադիր նախապայման չէ և չի կատարում գույքի նկատմամբ ծագող իրավունքների պետական գրանցման ինստիտուտի բացառիկ դերը:

Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով առաջարկվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում նախատեսել ընդերքօգտագործման իրավունքի, ընդերքի մասերի նկատմամբ ծագող գույքային իրավունքների և ընդերքի մասերի վերաբերյալ կնքվող գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը:

3. Կատարված հետազոտությամբ հիմնավորվել է, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով *«ընդերքօգտագործման պայմանագիր»* եզրույթն օգտագործվում է որպես հավաքական հասկացություն, որի ներքո պետք է հասկանալ այն բոլոր պայմանագրերը (երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման), որոնց կնքման նպատակը սուբյեկտին ընդերքօգտագործման իրավունք տրամադրելն է:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում հստակեցված չեն նաև ընդերքօգտագործման պայմանագրերի **էական պայմանները,** ինչը գործնականում կարող է հանգեցնել այդ պայմանագրերի կնքման փաստի հետ կապված վեճերի: Նշված հարցի հետազոտության արդյունքում կատարվել է եզրահանգում առ այն, որ օրենսդրությամբ ընդերքօգտագործման պայմանագրերի էական պայմանների համակարգումը անհրաժեշտ է կատարել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար էական պայմաններ են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 35-րդ, 41-րդ և 54-րդ հոդվածներում թվարկված այն պայմանները, որոնք որոշակիացնում են ընդերքօգտագործման պայմանագրի առարկան և օբյեկտը (աշխատանքի կատարման ժամկետները, պայմանագրի գործողության ժամկետը,

տրամադրվող տեղամասի ծայրակետային կոորդինատները): Բացի այդ, հիմնավորվել է, որ ընդերքօգտագործման պայմանագրի էական պայմաններ են նաև ընդերքօգտագործման վճարների, ինչպես նաև օգտակար հանածոների արդյունահանման կամ երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքների ծավալի ու տեսակների մասին պայմանները: Իսկ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 35-րդ, 41-րդ և 54-րդ հոդվածներում թվարկված որոշ պայմաններ ընդերքօգտագործման պայմանագրի էական պայման չեն կարող դիտարկվել (օրինակ՝ իրական շահառուի փոփոխության պետական գրանցումից հետո փոփոխության մասին լիազոր մարմնին 14 օրվա ընթացքում տեղեկացնելու պարտականությունը):

Օրենսդրությամբ ընդերքօգտագործման պայմանագրերի էական պայմանների համակարգման շրջանակում անհրաժեշտ է հաշվի առնել, որ ընդերքօգտագործման պայմանագրի յուրաքանչյուր տեսակ ունի նաև միայն տվյալ տեսակին բնորոշ էական պայմաններ (օրինակ՝ օգտակար հանածոյի մասին պայմանը օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրերի դեպքում), ինչը հիմնավորվում է նրանով, որ ընդերքօգտագործման իրավունքի տեսակները ունեն տարբեր նպատակներ և բովանդակություն:

4. Ընդերքի հետ ուղղակիորեն կապված քաղաքացիական իրավունքների օբյեկտներ են օգտակար հանածոները, որոնք այդպիսին են դառնում ընդերքից ֆիզիկապես անջատվելու՝ արդյունահանվելու պահից, իսկ ընդերքում տեղակայված լինելով *("in situ")* դրանք քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտներ չեն: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նախատեսում է արդյունահանված օգտակար հանածոները տնօրինելու ընդերքօգտագործողի իրավունքը, ինչի արդյունքում բոլոր դեպքերում վերջինս է դառնում օգտակար հանածոների սեփականատերը:

Ընդերքօգտագործման ոլորտում հանրային և մասնավոր շահերի արդյունավետ գույքային հավասարակշռման տեսանկյունից նշված կարգավորմանն այլընտրանք կարող են հանդիսանալ պետական կամ պետության մասնակցությամբ կազմակերպությունների միջոցով ընդերքօգտագործում իրականացնելու նախապատվության իրավունքը, առանձին տեսակի օգտակար հանածոների շրջանառության նկատմամբ պետական վերահսկողության սահմանումը, ինչպես նաև՝ արտադրանքի բաժանման պայմանագրերի ("Production sharing") կամ համատեղ ձեռնարկության պայմանագրերի ("Joint venture agreements") կառուցակարգերի կիրառումը:

5. ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 22-23-րդ հոդվածներով սահմանված՝ ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման կարգի խախտման իրավական հետևանքները օրենսդրությամբ նախատեսված չեն: Գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում ՀՀ օրենսդրության խախտմամբ կնքված ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման գործարքները կարող են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով դիտարկվել որպես անվավեր (տվյալ դեպքում՝ վիճահարույց) գործարքներ:

Միաժամանակ, ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը ընդերքօգտագործման իրավունքի գրավի դեպքում նախատեսել է կոնկրետ իրավական հետևանքներ՝ ընդերքօգտագործման իրավունքի գրավին ներկայացվող պահանջների խախտումով կնքված գրավի պայմանագրի առոչնչությունը (ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 28-րդ հոդվածի 2.1-ին հոդված, 29-րդ հոդվածի 6-րդ մաս) և ընդերքօգտագործման իրավունքի գրավի պայմանները խախտելու դեպքում ընդերքօգտագործման իրավունքի դադարման իրավական հետևանքը (ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետ): Այս համատեքստում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման և գրավի կանոնները խախտելու դեպքում օրենսդրի տարբերակված մոտեցումն արդարացված չէ, քանի որ երկու դեպքում էլ ընդերքօգտագործողն իրականացնում է ընդերքօգտագործման իրավունքի տնօրինման իրավազորությունը:

Հետևաբար, անհրաժեշտ է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 22-րդ հոդվածում կատարել համապատասխան լրացում և նախատեսել, որ օրենսդրությամբ սահմանված պայմանների խախտմամբ (այդ թվում՝ առանց լիազոր մարմնի համաձայնության) կնքված ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման գործարքն առոչինչ է:

6. Գործող օրենսդրական կարգավորումները ընդերքօգտագործողի բաժնետոմսերի, բաժնեմասերի օտարման նկատմամբ պատշաճ պետական վերահսկողություն չեն ապահովում, ինչի արդյունքում իրավաբանական անձ-ընդերքօգտագործողի մասնակիցների կամ բաժնետերերի փոփոխության միջոցով գործնականում հնարավոր է դառնում փոխանցել ընդերքօգտագործման իրավունքը՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 22-23-րդ հոդվածներով ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման կանոնները շրջանցելու միջոցով:

Խնդրի հաղթահարման նպատակով անհրաժեշտ է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համաձայն՝ ընդերքօգտագործող իրավաբանական անձի բաժնետոմսերի, բաժնեմասերի փոխանցման գործարքների կնքման համար պարտադիր կլինի նախապես ստանալ լիազոր մարմնի համաձայնությունը, եթե նման

գործարքի արդյունքում իրավաբանական անձի մասնակիցների կամ բաժնետերերի ձայների մեծամասնությունը կենտրոնանում է մեկ անձի ձեռքում:

7. ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է միայն երկրաբանական տեղեկատվությունը տնօրինելու և օգտագործելու ընդերքօգտագործողի իրավազորությունները: Ուստի, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում անհրաժեշտ է կատարել լրացում և նախատեսել նաև երկրաբանական տեղեկատվությունը տիրապետելու ընդերքօգտագործողի իրավազորությունը:

Բացի այդ, օրենսդիրը, ամրագրելով երկրաբանական տեղեկատվության նկատմամբ պետության սեփականության իրավունքը, միաժամանակ չի հստակեցրել ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում երկրաբանական տեղեկատվության նկատմամբ ընդերքօգտագործողի տնօրինման իրավազորության ծավալը, ինչի արդյունքում անորոշ է մնում, թե գործնականում ինչ է ենթադրում ընդերքօգտագործողի կողմից երկրաբանական տեղեկատվությունը տնօրինելը: Կատարված վերլուծության հիման վրա առաջարկվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում նախատեսել երկրաբանական տեղեկատվությունը տնօրինելու ընդերքօգտագործողի իրավազորության ծավալը՝ հաշվի առնելով, որ ընդերքօգտագործողի տնօրինման իրավազորությունը պետք է ենթադրի ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում երկրաբանական տեղեկատվությունը հատուցելի հիմքերով երրորդ անձանց օտարելու իրավունքը և որոշակի տեսակի երկրաբանական տեղեկատվության (օրինակ՝ պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասվող երկրաբանական տեղեկատվությունը) տնօրինման իրավազորության սահմանափակումները:

Գալով եզրահանգման, որ երկրաբանական տեղեկատվության որոշ տեսակներ ձևավորվում են մտավոր աշխատանքի արդյունքում և հանդիսանում են հեղինակային իրավունքի օբյեկտ (երկրաբանական հաշվետվությունները, ընդերքի երկրաբանական կառուցվածքի վերաբերյալ տվյալները, ընդերքում պարունակվող օգտակար հանածոների կանխատեսվող պաշարների վերաբերյալ տվյալները)՝ առաջարկվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանել երկրաբանական տեղեկատվության այն տեսակները, որոնք հեղինակային իրավունքի օբյեկտներ են և այդպիսի օբյեկտների իրավատերերին, ինչպես նաև թե՛ ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետում, թե՛ երկրաբանական տեղեկատվությունը պետությանը փոխանցելուց հետո այդ օբյեկտների հեղինակների գույքային և անձնական իրավունքների իրականացման առանձնահատկությունները:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «Ընդերքօգտագործման հարաբերությունների իրավական կարգավորման որոշ առանձնահատկություններ», «Գիտական Արցախ» պարբերական, № 2 (21), 2024, Երևան, էջեր 19-34:
2. «Ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման նշանակությունը», ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերական, № 137, 2025, «Աստղիկ գրատուն» հրատ., Երևան, էջեր 114-137:
3. «Ընդերքօգտագործման իրավունքի տեսակները, դրանց ծագման և դադարման հիմքերը ՀՀ օրենսդրությամբ», «Գիտական Արցախ» պարբերական, № 2 (25), 2025, Երևան, էջեր 97-113:
4. «Ընդերքօգտագործման հարաբերությունների պայմանագրային կարգավորման առանձնահատկությունները. ընդերքօգտագործման պայմանագիրը՝ որպես քաղաքացիաիրավական պայմանագիր», «Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերական, № 7-9 (313-315), 2025 հուլիս-սեպտեմբեր, Երևան, էջեր 36-50:
5. «Ընդերքը որպես քաղաքացիական իրավունքների ինքնատիպ օբյեկտ» (համահեղինակությամբ՝ Ա. Հովհաննիսյանի), «Արդարադատություն», № 1 (60), 2025, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հրատ., Երևան, էջեր 68-80:
6. «Երկրաբանական տեղեկատվության քաղաքացիաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները ՀՀ օրենսդրությամբ», «Արդարադատություն», № 2 (61), 2025, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հրատ., Երևան, էջեր 80-86:
7. «Ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», «Պետություն և իրավունք», № 3 (97), 2023, ԵՊՀ հրատ., Երևան, էջեր 126-138:
8. “Peculiarities of the civil-law status of the subsoil use right under the legislation of the Republic of Armenia”, «Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերական, № 1-3 (319-321), 2026 հունվար-մարտ, Երևան, էջեր 85-94:

МАНЕ АРАМОВНА МАРКОСЯН

ПРОБЛЕМЫ ГРАЖДАНСКО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ОТНОШЕНИЙ НЕДРОПОЛЬЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Резюме

Несмотря на то, что сфера недропользования является одной из стратегически значимых отраслей экономики Республики Армения, действующее законодательство, регулирующее отношения в данной сфере, содержит ряд системных недостатков, оказывающих негативное влияние на инвестиционную привлекательность отрасли и перспективы её развития. Анализ национального законодательства свидетельствует о том, что регулирование отношений в сфере недропользования носит преимущественно административно-правовой характер. При этом значение гражданско-правовых норм, институтов и принципов, а также диспозитивного метода в механизме правового регулирования отношений недропользования остается недооценённым, а сфера их применения — неоправданно ограниченной.

В условиях современной экономики и развития свободных рыночных отношений эффективное правовое регулирование отношений недропользования требует оптимального сочетания административно-правовых и гражданско-правовых механизмов регулирования. Значимость гражданско-правового регулирования в данной сфере обусловлена тем, что отношения недропользования в значительной степени основаны на договорных началах и возникают между юридически равноправными субъектами. Кроме того, в условиях рыночной экономики объекты, существующие в сфере недропользования, перестали рассматриваться исключительно как «природные богатства» и приобрели характер имущества, а возникающие по их поводу отношения стали носить товарно-денежный характер. В связи с этим особую актуальность приобретает исследование гражданского оборота объектов гражданских прав в сфере недропользования, права собственности и иных вещных прав на такие объекты.

Все это свидетельствует о необходимости определения и уточнения сферы применения норм, институтов и принципов гражданского права, а также диспозитивного метода правового регулирования в отношениях недропользования, исследования теоретических и практических проблем их применения и выработки соответствующих практических решений. Указанные обстоятельства обусловливают научно-практическую значимость

исследования и подтверждают актуальность избранной темы диссертации.

Научная новизна диссертации заключается в том, что в отечественной юридической науке впервые проведено комплексное исследование проблем гражданско-правового регулирования отношений недропользования. На основе анализа различных научных подходов, национального и зарубежного законодательства, а также правоприменительной практики выявлены значение и пределы гражданско-правового регулирования отношений недропользования, исследованы особенности применения норм гражданского права в процессе возникновения, изменения и прекращения права недропользования, а также рассмотрены основные вопросы договорного регулирования отношений недропользования. В рамках исследования также проанализированы особенности гражданско-правового режима отдельных объектов гражданских прав в сфере недропользования.

В результате исследования предложены новые подходы и решения, направленные на преодоление теоретических и практических проблем, возникающих в контексте гражданско-правового регулирования отношений недропользования. Сформулированы как теоретические выводы, так и практические предложения, направленные на совершенствование механизмов гражданско-правового регулирования отношений недропользования на законодательном уровне.

Теоретическое значение исследования заключается в комплексном анализе многочисленных теоретических и практических проблем гражданско-правового регулирования отношений недропользования, а также в разработке таких интерпретаций и предложений, которые будут способствовать совершенствованию механизмов применения гражданского права к отношениям недропользования при обеспечении баланса публичных и частных интересов.

Представленный анализ, интерпретации, выводы и предложения могут быть использованы в дальнейших исследованиях, посвященных сфере недропользования, в рамках научных дискуссий и образовательного процесса, а также в правотворческой деятельности и правоприменительной практике соответствующих уполномоченных органов и недропользователей.

Основные положения и результаты диссертационного исследования отражены в научных публикациях автора, а также были представлены на научных конференциях.

MANE ARAM MARKOSYAN

PROBLEMS OF CIVIL LAW REGULATION OF SUBSOIL USE RELATIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

Summary

Although the subsoil use sector is one of the strategically important branches of the economy of the Republic of Armenia, the legislation governing relations in this field contains a number of systemic shortcomings that negatively affect the investment attractiveness of the sector and its prospects for development. An analysis of national legislation demonstrates that the regulation of subsoil use relations is predominantly administrative in nature. At the same time, the role of civil law norms, institutions and principles, as well as the dispositive method within the mechanism governing subsoil use relations, remains underestimated, and the scope of their application is unjustifiably limited.

In the context of a modern economy and the development of free market relations, the effective regulation of subsoil use relations requires an optimal combination of administrative and civil-law mechanisms. The importance of civil law regulation in this sphere stems from the fact that subsoil use relations are largely based on contractual arrangements and arise between legally equal parties. Furthermore, under market economy conditions, objects existing within the sphere of subsoil use are no longer regarded solely as "natural resources" but have acquired the characteristics of property, while the relations arising in connection with them have assumed a commodity-money nature. Consequently, particular relevance is attached to the study of the circulation of civil law objects within the subsoil use sector, as well as issues concerning ownership rights and other proprietary rights over such objects.

These circumstances demonstrate the need to define and clarify the scope of application of civil law norms, institutions, and principles, as well as the dispositive method of legal regulation, within subsoil use relations, to examine the theoretical and practical issues associated with their application, and to develop appropriate legal solutions. Accordingly, these considerations determine the scientific and practical significance of the research and confirm the relevance of the chosen topic.

The scientific novelty of the thesis lies in the fact that it constitutes the first comprehensive study in Armenian legal scholarship devoted to the problems of civil law regulation of subsoil use relations. Based on an analysis of various academic approaches, national and foreign legislation, and judicial practice, the

thesis identifies the significance and limits of civil law regulation in the field of subsoil use, examines the peculiarities of applying civil law norms in the process of the emergence, modification, and termination of subsoil use rights, and explores the principal issues of contractual regulation of subsoil use relations. The study also analyzes the specific features of the civil law regime governing certain objects of civil rights in the sphere of subsoil use.

As a result of the research, new approaches and solutions have been proposed to address the theoretical and practical issues arising in the context of the civil-law regulation of subsoil use relations. Both theoretical conclusions and practical proposals aimed at improving the mechanisms of civil-law regulation of subsoil use relations at the legislative level have been formulated.

The theoretical significance of the study lies in the comprehensive analysis of numerous theoretical and practical issues related to the civil-law regulation of subsoil use relations, as well as in the development of interpretations and proposals that may contribute to the improvement of mechanisms for the application of civil law to subsoil use relations while ensuring a proper balance between public and private interests.

The analysis, interpretations, conclusions, and proposals presented in the thesis may be used in further research concerning the subsoil use sector, within academic discussions and educational processes, as well as in law-making processes and law-enforcement practice by competent public authorities and subsoil users.

The principal provisions and findings of the thesis have been reflected in the author's scientific publications and have also been presented at scientific conferences.